ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

«ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք.Երևան 12 փետրվարի 2021թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Բաբաջանյան
Ռ.Ջանգոզյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն.Ավետիսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Կ.Հայրապետյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) մասին,
3. Մերժված հայտերի մասին,
4. Ներկայացված հիմնավորումների մասին,
5. Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) մասին
(Կ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ 2021թ.-ի հունվարի 26-ին **ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21**/2 ծածկագրով գնման ընթացակարգի 39-րդ չափաբաժնի ընտրված մասնակից՝ **<<Ֆարմեգուս>> ՍՊԸ**-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծ:

Մասնակցին տրվել է 10 աշխատանքային օր մինչև՝ 10.02.2021թ., ժամանակ որպեսզի ներկայացնի հաստատված պայմանագիրը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից հաստատված պայմանագիրը չի ներկայացվել, ուստի հանձնաժողովը որոշեց համաձայն **ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.13-րդ կետի մերժել **<<Ֆարմեգուս>> ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը և ընթացակարգի 39-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

3" Մերժված հայտերի մասին
(Կ.Հայրապետյան)

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի բ. պարբերությունը՝ **<<որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց>>**, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել <<Ֆարմեգուս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4.Ներկայացված հիմնավորումների մասին
(Կ.Հայրապետյան)

Էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ **հիմնավորումներ չեն ներկայացվել:**

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

5.Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին

(Կ.Հայրապետյան)

Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն 39-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ ներկայացված հայտերը չեն համապատասխանում հրավերի պայմաններին :

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Բաբաջանյան

Ռ.Ջանգոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն.Ավետիսյան